

Ավտոմեքենայի գրավադրմամբ սպառողական վարկեր
Տեղեկատվական ամփոփագիր

Թարմացվել է 19.06.2023թ.

Վարկը տրամադրվում է «Պրեմիում Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ (այսուհետ՝ ՈՒՎԿ) կողմից ՀՀ քաղաքացի և/կամ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այսուհետ՝ չաճախորդ) ներքոհիշյալ պայմաններով.

Ընդհանուր դրույթներ	
Վարկի արժույթ	ՀՀ դրամ
Վարկի գումար	100,000-20,000,000 ՀՀ դրամ
Վարկի ժամկետ	12-60 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	19%
Տարեկան փաստացի տոկոսադրույք*	22.17%-26.73%
Վարկի և տոկոսագումարների մարումներ	Ամսական հավասարաչափ մարումով (անուիտետային)
Վարկի ամսական սպասարկման միջնորդավճար	Չի սահմանվում (0%)
Սպասարկման վճարի մարումներ	Չի սահմանվում (0%)
Վարկի տրամադրման միանվագ միջնորդավճար	2.5%
Վարկային փաթեթի կազմման վճար	Չի սահմանվում (0%)
Գրավի տեսակ	Էլեկտրական ավտոմեքենա
Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն	Գրավադրվող էլեկտրական ավտոմեքենա շուկայական արժեքի 70%-չափով:
Տրամադրման եղանակ	Անկանխիկ
Ապահովություն	
Ապահովման միջոց	Ամերիկյան, Եվրոպական, Ճապոնական, Հարավ-Կորեական, արտասահմանյան էլեկտրական ավտոմեքենաների դեպքում մինչև 3 տարի արտադրության ժամկետը չգերազանցող էլեկտրական ավտոմեքենաներ:
Գրավատու	21 տարին լրացած ռեզիդենտ ֆիզիկական անձ
Գրավի առարկայի գնահատումը	Գրավի առարկան պետք է գնահատվի ՈՒՎԿ-ի հետ համագործակցող մասնագիտացված կազմակերպություններից մեկի կողմից: Գնահատման գները կազմում են 8,000-12,000 ՀՀ դրամ:
Ապահովագրություն	Կասկո ապահովագրություն վարկի գործողության ողջ ժամկետով
Այլ պայմաններ	
Որոշման կայացման և տեղեկացման առավելագույն ժամկետը	Պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո առավելագույնը 1 աշխատանքային օր

Որոշման վավերականության առավելագույն ժամկետը	15 աշխատանքային օր
Վարկի դիմումի ընդունման, ձևակերպման և տրամադրման վայրը	ՈՒՎԿ գրասենյակ
Վարկառուին վարկի գումարի տրամադրման ժամկետը	Գրավի առարկայի նկատմամբ գրավի իրավունքը հաստատող փաստաթուղթը ստանալուց հետո 1 աշխատանքային օր

*** Տարեկան փաստացի տոկոսադրույքը բարձր է և «Պրեմիում Կրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հորդորում է սպառողին նախապես դիտարկել շուկայում առկա այլընտրանքները:**

Վաղաժամկետ մարում

Հաճախորդն իրավունք ունի՝

- ✓ վաղաժամկետ կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ վերադարձնելով տրամադրված վարկի գումարը կամ դրա մի մասը հաշվարկված տոկոսների հետ միասին,
- ✓ առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել Պայմանագիրը դրա ուժի մեջ մտնելու պահից հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում /մտածելու ժամանակ/՝ վերադարձնելով տրամադրված Վարկի գումարը հաշվարկված Տոկոսների հետ միասին:

Հաճախորդն իրավունք ունի վարկային պայմանագրով նախատեսված պարտավորությունները ժամկետից շուտ կատարել (մարել)՝ անկախ այն հանգամանքից, թե նման իրավունք վարկային պայմանագրով նախատեսված է, թե ոչ: Վարկային պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու (մարելու) դեպքում համամասնորեն կնվազեցվի վարկավորման ընդհանուր ծախսը: Վարկի գումարի վաղաժամկետ մարման դեպքում տույժ չի սահմանվում:

Վարկառուին ներկայացվող պահանջները

21 տարին լրացած ռեզիդենտ ֆիզիկական անձ, որի տարիքը վարկի մարման օրը չի գերազանցում 63 տարեկանը:

Տույժեր

Պայմանագրով նախատեսված վարկի և/կամ տոկոսագումարի մարման ժամկետների խախտում թույլ տալու դեպքում Վարկառուն վարկային կազմակերպությանը վճարում է տույժ՝ ժամկետանց գումարի **0.10%** չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար: Ընդ որում, ժամկետանց վարկի գումարի նկատմամբ շարունակվում է հաշվարկվել տարեկան անվանական տոկոսադրույքը մինչև ժամկետանց վարկի գումարի հետվերադարձը:

Պայմանագրով որոշված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել ՀՀ ԿԲ սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով: Պայմանագրով որոշված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել սվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը:

Վարկի գումարի վաղաժամկետ մարման դեպքում որևիցե **տույժ չի սահմանվում:**

Վարկի ապահովում

- ✓ Վարկառուի եկամտի և վարկային պատմության մասին տեղեկատվություն:

Տոկոսագումարների հաշվարկման օրինակ

Վարկի գումար	1,000,000 ՀՀ դրամ
Անվանական տոկոսադրույք	19%
Մարման ժամկետ	60 ամիս
Մարման տեսակ	անուիտետային

Ամսական մարում՝ (մայր գումար + տոկոսագումար+սպասարկում)	25,941 ՀՀ դրամ
Ընդհանուր տոկոսագումար	556,433 ՀՀ դրամ
Մարումների հանրագումար	1,556,433 ՀՀ դրամ

Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է անվանական տոկոսադրույքի հիման վրա, որը կիրառվում է նվազող մնացորդի նկատմամբ, իսկ տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը Ձեզ համար տոկոսագումարները և վարկի տրամադրման ու սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել [հղմամբ](#):

Վարկի ժամկետի երկարաձգում

Վարկի ժամկետը կարող է երկարաձգվել բացառապես ՈԻՎԿ որոշման հիման վրա, համաձայն երկարաձգման օրվա դրությամբ ՈԻՎԿ գործող վարկավորման պայմանների և սակագների:

ՈԻՎԿ հետ հաղորդակցման եղանակ

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել «Պրեմիում Կրեդիտ» ՈԻՎԿ ՓԲԸ հետ Ձեր նախընտրած եղանակով՝ էլեկտրոնային փոստի միջոցով, փոստային կապի միջոցով և հեռախոսային զանգի միջոցով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է՝ հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկից և ապահովում է գաղտնիություն:

Քաղվածքների, տեղեկանքների և այլ տեղեկատվության տրամադրում (ներառյալ ԱԱՀ)

- ✓ Քաղվածքի տրամադրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարբերականությամբ (մեկ անգամ)՝ 0 ՀՀ դրամ,
- ✓ Վարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի տրամադրում՝ 3,000 ՀՀ դրամ:

Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

- ✓ Դիմում (սահմանված ձևով),
- ✓ Վարկառուի անձնագիր և սոց. քարտ, և/կամ նույնականացման քարտ,
- ✓ Գրավատուի անձնագիր և սոց. քարտ, և/կամ նույնականացման քարտ,
- ✓ Գրավադրվող գույքի սեփականության վկայականը, տեխնիկական անձնագիրը,
- ✓ գրավի գնահատման վերաբերյալ տեղեկատվություն,
- ✓ այլ անհրաժեշտ փաստաթղթեր:

Ուշադրություն

Պրտավորության մարման ժամկետներում վարկառուի կողմից պայմանագրով ստանձնած

պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վարկատուն վարկառուի պարտքի վերաբերյալ տեղեկությունները ուղարկում է ՀՀ կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին և վարկային բյուրոներ (ԱՔՌԱ և այլն): Վարկառուն տեղեկացված է նաև, որ վատ վարկային պատմություն ունենալը իր համար հետագայում կարող է խոչընդոտ հանդիսանալ այլ վարկեր ստանալիս: Դուք իրավունք ունեք վարկային բյուրոյից տարեկան մեկ անգամ անվճար ստանալ Ձեր վարկային պատմության զեկույցը:

ՈւՎԿ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է սպառողից՝ «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքով պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ հաճախորդին:

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act - FATCA) հիմա վրա ԱՄՆ կառավարության հետ կնքված համաձայնագրի պայմաններին համապատասխան, Ձե՛՛ն՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար, ՈւՎԿ կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

ՈւՎԿ իրավասու է փոփոխել և լրացնել մատուցվող լրացուցիչ ծառայությունների սակագները՝ պայմանագրով սահմանված կարգով ծանուցելով այն մասին հաճախորդներին՝ սեփական ինտերնետային կայքում (www.premiumcredit.am) հաղորդություն հրապարակելով, ՈւՎԿ տարածքում հայտարարություններ փակցնելու միջոցով, փոստով ծանուցումն առաքելու միջոցով և հաճախորդի կոցմից ընտրված ՈւՎԿ կողմից առաջարկվող այլ եղանակով տրամադրելու միջոցով, որը համարվում է Հաճախորդի պատշաճ իրազեկում:

Մինչև 15 մլն ՀՀ դրամին համարժեք գումարի չափով վարկ ստանալու համար դիմելիս ՈւՎԿ Ձեզ կտրամադրի սպառողական վարկի էական պայմանների անհատական թերթիկ, որում կներկայացվեն Ձեզ տրամադրվելիք վարկի անհատական պայմանները:

Վարկը տրամադրելու դրական որոշման գործոնները

- ✓ Հայտատուն համապատասխանում է տվյալ վարկի տրամադրման պայմաններին և դրույթներին,
- ✓ Հայտատուն ՈւՎԿ պահանջով իր վարկային պարտավորությունն ապահովում է գրավով,
- ✓ Հայտատուի վարկային պատմությունը դրական է կամ բացակայում է:

Վարկը մերժման գործոնները

- ✓ Վարկի տրամադրման պահին դասակարգված վարկային պարտավորությունների առկայությունը,
- ✓ Պահանջվող փաստաթղթերը չներկայացնելը,
- ✓ Անձի կամ անձը հաստատող փաստաթղթի նկատմամբ կասկածները,
- ✓ Գրավի առարկայի հետ կապված խնդիրներ, կեղծ կամ անարժանահավատ տեղեկատվության կամ կեղծ փաստաթղթերի ներկայացումը,
- ✓ Հաճախորդի մասին այնպիսի տեղեկատվության առկայությունը, որը կասկածի տակ է դնում հաճախորդի կողմից ՈւՎԿ-ին տրամադրված/հայտարարված տեղեկությունները,
- ✓ Հաճախորդի մասին այնպիսի տեղեկատվության առկայություն, որը կասկածի տակ է դնում վարկի վերադարձելիությունը:

Վարկավորման դրական կամ բացասական որոշման կայացումը, Հաճախորդին որոշման մասին տեղեկացումը և վարկի տրամադրումը կատարվում է առավելագույնը 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

«Ձեր ֆինանսական տեղեկատուն»

«Ձեր ֆինանսական տեղեկատուն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացվող

Էլեկտրոնային համակարգ է՝ <https://www.fininfo.am/finhelper/index.php?type=consumer&credtype=car>:

Վեճերի և տարաձայնությունների լուծման կարգ

Հաճախորդի և ՈԻՎԿ միջև ծագած ցանկացած վեճ և տարաձայնություն նախ և առաջ լուծվում է երկուստեք փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված ինչպես դատական կարգով, այնպես էլ ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

Ծանուցում ֆինանսական համակարգի հաշտարարի վերաբերյալ

Տեղեկացնում ենք, որ ֆիզիկական անձ հանդիսացող Վարկառուի՝ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող պայմանագրից բխող ՈԻՎԿ նկատմամբ գույքային պահանջները կարող են ներկայացվել ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը:

ՈԻՎԿ և ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրով ՈԻՎԿ-ն հրաժարվել է գույքային պահանջի չափը 100.000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի գումարի չափը 300.000 ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը չգերազանցող պահանջներով Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները դատական կարգով վիճարկելու իրավունքից:

Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15,

«Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն, 7-րդ հարկ

Էլ. փոստ՝ info@fsm.am

Հեռախոս՝ (+374) 60 701111

Ֆաքս՝ (+374) 10 582421

Կապ ՈԻՎԿ հետ

- ✓ Այցելել ՈԻՎԿ www.premiumcredit.am ինտերնետային կայք,
- ✓ Այցելել ՈԻՎԿ գրասենյակ՝ 0010 ք. Երևան, Բուզանդի 1/3, շին. 1 և 2,
- ✓ Չանգահարել (+374) 11 290000 հեռախոսահամարով
- ✓ Viber, Whatsapp՝ (+374) 44 294000

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Հավելյալ տեղեկատվության համար կարող եք կապ հաստատել ՈԻՎԿ հետ:

«Պրեմիում Կրեդիտ» ՈԻՎԿ ՓԲԸ վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից: